ՆԱԽԱԳԻԾ

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_____» _____ 2024 թվականի N 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի,«Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի,88-րդ հոդվածի,համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի կողմից 2025թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից :

Համայնքի ավագանու անդամներ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԻՄՆԱՍՎՈՐՈՒՄ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Համաձայն գործող օրենսդրության, համայնքի ավագանին սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը :Ուստի է անհրաժեշտ է մինչև համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի հաստատելը ներկայացնել ավագանու հաստատմանը « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի կողմից 2025 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի կողմից 2025 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» համայնքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ համայնքի բյուջեում եկմուտների ավելացում է նախատեսվում 4 մլն դրամով :

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

« Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի կողմից 2025 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» համայնքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չկա :

Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու
2024 թվականի -ի N -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հողամասերի, շինությունների, նպատակային, գործառնական նշանակության փոփոխության նպատակով փաստաթղթերի կազմման համար.
   1) ֆիզիկական անձանց համար 40 000 (քառասուն հազար) դրամ
   2) իրավաբանական անձանց համար 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ
2. Հատակագծի հաստատման համար 3000 (երեք հազար) դրամ
3. Իրադրության հատակագծի տրամադրման համար 1000 (հազար) դրամ
4. Ակունք համայնքի Ակունք և Կապուտան բնակավայրերի գյուղամերձ արոտներից օգտվելու համար.
   1) մեկ գլուխ խոշոր եղջերավոր անասունի համար տարեկան 500 (հինգ հարյուր) դրամ
   2) մեկ գլուխ մանր եղջերավոր անասունի համար տարեկան 200 (երկու հարյուր) դրամ;

5. Ակունք համայնքի բնակավայրերի գյուղամերձ արոտների տարածքում գտնվող ջրարբիացման համակարգի խմոցներից օգտվելու մեկ արոտային սեզոնի համար.

1) մեկ գլուխ խոշոր եղջերավոր անասունի համար 400 (չորս հարյուր) դրամ

2) մեկ գլուխ մանր եղջերավոր անասունի համար 200 (երկու հարյուր) դրամ;